

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

آزتاگ جريدة يومية سياسية وأدبية - الديرة السوالة، إيشادرونيان

1500 L.Ո. 740Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 189 (20945) ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԵՐ 2001 10 ԷՁ

ՊԱԹՐՈՒՆԻ ՄՁԿԻԹԻՆ ՀՐԿԻՉՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ ՄԵԾ ԱԼԻՔ ՅԱՌԱՋԱՅՈՒՅ

Պաթրուների մզկիթին հրկիզումը առանցքը հանդիսացաւ պետական եւ քաղաքական շրջանակներու շարաժափերը՝ դործունէութեան:

Դէպքին մասին արտայայտուելով, Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ զրուստեց երկրի ապահովութիւնն ու կայունութիւնը պահպանելու համար բանակին եւ ապահովութեան մարմիններու ի գործ դրած ճիգերը եւ նկատել տուաւ, որ Լիբանան տարիներ առաջ դուրս եկած է մտահոգիչ հանգրուաններէն եւ մասնակի դէպքերը անդրադարձ չեն կրնար ունենալ ազգային կայունութեան երթին վրայ:

Ազօթալայրեր թիրախ դարձուցած ապահովական վերջին խախտումներուն մասին նախագահ Լահուտ ըսաւ, որ նման արարքներու կրնան դիմել միայն իսրայէլի ծառայող գործակալներ, որոնք արդարադատութեան հետ պիտի չմնան:

Ուրբաթէն Շարաթ լուսցող դիշերուան ընթացքին հրդեհ մը ծագած էր Պաթրուների մզկիթին մէջ, պատճառելով նիւթական վնասներ:

Դէպքին վայրը փութացին հրշէջներն ու ապահովութեան ուժերը, որոնք շրջանի բնակչութեան հետ մարեցին հրդեհը:

Հիւսիսի նահանգապետ Նասիֆ Քալոշ, Պաթրուների գաւառապետ Իլհամ Տուէյճի, Պաթրուների մարտնչներու առաջնորդ Պուլսո Սաատէ եւ հիւսիսի մէջ ապահովութեան ու գաղտնիքի մարմիններու պատասխանատուները փութարեցին ժողով մը, որուն ներկայ գտնուեցան մզկիթի շէխերը:

Ժողովին ետք Քալոշ յայտնեց, որ մասնագէտներ պիտի ճշգնեն հրդեհին պատճառը, պիտանալու, թէ անիկա ոճրային արարք է կամ երկարական խանգարումի հետեանք:

Ներքին գործոց նախարար էլիաս Մըր զգուշացուց. թէ ոմանք կը փորձեն միջամաշնաբային հարցեր ստեղծել տարբեր շրջաններու մէջ ազօթալայրերու դէմ ալ բռնելով: «Ապահովութիւնը կարմիր գիծ մըն է եւ թոյլատրելի չէ գայն շրջանցել, մասնաւոր եկեղեցիներու եւ մզկիթներու դէմ արարքներով միջլիբանանեան հարցեր գրգռելու համար», ըսաւ ան, դիտել տալով, որ լիբանանցիք այսպիսի պայմաններու մէջ բարձր գիտակցութիւն ցուցաբերելով յազթահարած են մեծ մարտահրաւրներ եւ պահպանած իրենց միասնութիւնը:

Մըր ըսաւ, որ բանակը, ներքին ապահովութեան ուժերն ու ապահովութեան մարմինները անխնայ պիտի գտնուին ապահովութիւնն ու կայունութիւնը խախտելու փորձ կատարողներուն դէմ:

Հանրապետութեան միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանի կողմ ուղղեց լիբանանցիներուն առաւելագոյն չափով գիտակից եւ զգուշ գտնուելու, ի տես ներքին հարցեր յառաջացնելու դիտաւորութեամբ խափանարարական արարքներուն:

Շար.ը՝ էջ 2

35 ՊԱՏԱՆԻՆԵՐ ՏՈՒՆ ԻՐԵՆՑ ԽՈՍՏՈՒՄԸ

Երէկ՝ Կիրակի, 21 Հոկտեմբեր 2001ին, Հ. Յ. Լիբանանի Պատանեկան Միութեան միացան 35 նոր պատանիներ, որոնք իրենց խոստումը կատարեցին Հ. Յ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու մարզական մրցաշարքի աւարտին: Անոնց սերունդը կոչւեցաւ «Շուշիի սերունդ»:

Օրուան կնքահալըն էր ընկ. Յարութիւն Քեպպաճեան, որ անդրադառնալէ ետք Գէորգ Չաուշի լեղափոխական գործունէութեան, պահանջեց ըլլալ օրինակելի եւ տիպար դաշնակցական պատանիներ:

ԱՊԱՀՈՎ ԶԳԱ՝



Հասցէ՝ ԱՖԷՏ-ի Ծէնք
Բ Յարկ - Պուրճ Համուտ
Հեռ: 01 242556 - 242557

ԱՅԴԱՆԻՍՏԱՆԻ ԴԵՄ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ
ԹԵՒԱԿՈՒՆԵՑԻՆ ԵՐՐՈՐԴ ՇԱՐԱԹԸ

ԹԱԼԵՊԱՆՆԵՐՈՒ ՇԱՄԱՁԱՅՆ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՏ ՄՂՈՒԱԾ Է

Մ. Նահանգներ երէկ Աֆղանիստանի դէմ օդային հարում-ներու երրորդ շաբաթը թեւակոխեցին, կեդրոնանալով մայրաքաղաք Բապուլի վրայ, ուր իշխող թալեպանները կառավարութեան արտակարգ նիստի մը ընթացքին որոշած են ամրապնդել երկրին պաշտպանութեան միջոցները:

Թալեպանները յայտնած են, թէ երէկ առաւօտեան յարձակումներուն 18 քաղաքային սպաննուած է եւ 23 ուրիշներ վիրաւորուած են: Անոնք կ'ըսեն, թէ Հոկտեմբեր

7էն ի վեր, երբ օդային յարձակումները սկսած էին, 900 քաղաքային զոհ արձանագրուած է:

Թալեպաններու կառավարութիւնը երէկուան իր նիստին որոշած է ամերիկեան քոմանտոներու յարձակումներուն դէմ պաշտպանուիլ՝ յաւելաւ ծանր վէնքեր, իր թիշարձակման սարքեր եւ հակաօդանաւային վէնքեր բաշխելով:

Թալեպանները յայտնած են, թէ յաջող կերպով կրցած են ետ մղել աֆղան հողամասի վրայ ամերիկեան

գլխաւորութեամբ առաջին գործողութիւնը, որուն ընթացքին խուլարկուած է թալեպաններու ղեկավար մոլլա Մոհամէտ Օմարի կողմէ իբրեւ հրամանատարութեան կեդրոն օգտագործուող տուն մը:

Ամերիկացի պաշտօնատարներ յայտնած են, թէ աւելի քան 100 կիսուոր մասնակցած է գործողութեան: Փենթագոնը յայտնած է, թէ կիսեւր ուժերէն երկու անդամներ զոհուած են եւ երեք ուրիշներ վիրաւորուած:

Շար.ը՝ էջ 10

ՇԱՆԿԱՅԻ ՄԷՋ

ՊՈՒՇ - ՓՈՒԹԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ



ՇԱՆԿԱՅԻ, 21 (ՌՈՅԹԸ).— Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Կիրակի օր Շանկհայի մէջ զորդի ունեցած տեսակցութեան մը ընթացքին, կորիզային իրենց գէնքերը մեծ համեմատութեամբ կրճատելու հարցը քննարկած են եւ յայտնած, թէ յառաջդիմութիւն արձանագրած են հակամիջցամաքամասային հրթիրներու համաձայնագրի (էյ. Պի. Էմ.) ճակատագրի միջոցով:

Երկու ղեկավարները,

որոնք ԱՓԷՔի վեհաժողովէն ետք ժողով մը գումարած են, նաեւ խիստ ոճով յայտարարութիւն մը հրապարարակած են՝ աւելի սերտօրէն գործակցելու խոստում տալով, հաւաքական քանդուած, ներառեալ կենսաբանական գէնքերու ահաբեկչութեան նպատակով գործածութիւնը արգելակելու համար:

Պուշ գովասանքով արտայայտուած է Փութինի մասին, յայտնելով, որ ան ուժեղ կերպով զօրավիզ կանգնած է Աֆղանիստանի մէջ ամերիկեան զինուորական գործողութիւններուն՝ Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք:

Իր կարգին, Փութին Ուաշինկթընի հակադարձութիւնը «չափաւոր եւ նպատակայարմար» նկատած է:

Ինչ կը վերաբերի գէնքերը հակակռելու հարցին, Պուշ ըսած է, թէ հրթիրներու կրճատումին մասին շօշափելի թիւեր չէ տուած, ինչպէս նաեւ ան վերահաստատած է իր այն տեսակէտը, թէ 1972ի էյ. Պի. Էմ. համաձայնագրի, որ կ'արգիլէ հրթիրային պաշտպանութեան նոր

գործիւններու մշակումը, «ժամանակավրէպ է եւ իմ կարծիքով՝ վտանգաւոր»:

Կրեմլինի ղեկավարը նշեալ համաձայնագիրը պաշտպանելու համար մեծ ճիգեր ի գործ չէ դրած, ինչպէս ըրած է անցեալին, գայն պարզապէս աշխարհի կայունութեան «կարեւոր մէկ տուեալը» կոչելով:

Ան ըսած է, թէ կարելի է համաձայնութեան մը յանդիպումներու ունենալով Ռուսիոյ եւ Մ. Նահանգներու ազգային շահերը եւ այս շատ կարեւոր մարզին մէջ միջադրային կայունութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը:

Փութին եւ Ջինաստանի նախագահ Ճիւսկի Մեմին Շարաթ օր էյ. Պի. Էմ. հանդէպ իրենց յանձնառութիւնը վերահաստատած են:

Պուշ կ'ուզէ հրաժարիլ անկէ՝ գերադրական հրթիրային պաշտպանութեան զրուծիւն մը կարենալ հաստատելու համար:

Պուշ եւ Փութին յառաջիկայ միջոցաւ արձակ տեսակցութիւն պիտի ունենան Պուշի Բրոքքին (Թեքսաս) «Ռեյն» մէջ:

907 ՅՕԴՈՒԱԾԻ ԶՆՁՈՒՄԸ ԺԽՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ԿՐԱՅ

Կ'ԸՄԸ ՎԱՐԳԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան յայտարարած է, թէ 907 Յօդուածի ջնջումը ժխտական անդրադարձ պիտի ունենայ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին վրայ: «Արմ'ինֆօ» լրատու գործակալութեան հետ հանդիպումի մը ընթացքին նախարարը ըսած է, թէ 907 Յօդուածը, որ կ'արգիլէ ամերիկեան օժանդակութիւն կատարել Արցախէն, մաս կը կազմէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման արտաքին, եւ անոր ջնջումը պիտի խախտէ տագնապի լուծման գործընթացին մէջ ցարդ ձեռք բերուած հաւասարակշռութիւնը:

Օսկանեան նաեւ նշած է, թէ Յօդուածին ջնջումը Միացեալ Նահանգներու ներքին հարցն է եւ պաշտօնական Երեւանը կրնայ միայն իր կարծիքը արտայայտել այս գծով: Այս առումով, նշած է Օսկանեան, 907 Յօդուածի ջնջումը պէտք չէ առնչուի Հայաստանի արտաքին քաղաքականութեան: «Այսուհանդերձ, անոր ջնջումը ժխտական ազդեցութիւն պիտի ունենայ շրջանային հարցերու վրայ», ըսած է Օսկանեան:

ԵԱՀԿԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ Կ'ԱՅՑԵԼԷ ԱԶՐՊԵՅՃԱՆ, ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵԱՀԿի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ատրիան Սեվերին Հոկտեմբեր 21էն 29 Կովկաս կ'ալցել: Ան յաջորդարար Արցախէն, Վրաստան եւ Հայաստան կ'ալցել՝ մօտէն ծանօթանալու համար Հարաւային Կովկասի իրավիճակին: Երեք երկիրներուն մէջ Սեվերին հանգիստեմբեր պիտի ունենայ նախագահներուն, կառավարութիւններուն՝ եւ խորհրդարաններու նախագահներուն, ոչ կառավարական կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ ԵԱՀԿի ներկայացուցիչներուն հետ: Անոր ալցելութեան առաջին հանգրուանը Պաքոն է:

Հայաստանի մէջ, Հոկտեմբեր 26էն 29, Սեվերին պիտի հանդիպի ԵԱՀԿի Երեւանի պատուիրակութեան հետ եւ պիտի լսէ անոր գեկուցումը: Կը սպասուի, որ ան կարճատեւ ալցելութիւն մը տայ նաեւ Լեռնային Ղարաբաղ, ծանօթանալու կացութեան եւ հանդիպում ունենալու Լեռնային Ղարաբաղի ղեկավարութեան հետ:

ՊԱՂԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ

ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԿՐ ՄՆԱՅ ԼԱՐՈՒԱԾ ԵՒ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ


Պաղեստինեան շրջաններուն մէջ մթնոլորտը կը մնայ լարուած եւ բախումները կը շարունակուին խառնչելան ներխուժող ուժերուն հետ: Այսրորդանանի մէջ երկու պաղեստինցիներ սպաննուեցան երէկ եւ տասնեակ մը ուրիշներ վիրաւորուեցան:

Բեթղեհէմի մէջ տեղի ունեցած բախումներուն սպաննուեցան պաղեստինցի քաղաքային մը եւ ոստիկան մը: Վեց քաղաքայիններ ալ վիրաւորուեցան: Իսկ Քալբիլիա քաղաքին մէջ վիրաւորուեցան երկու պաղեստինցիներ: Այսրորդանանի ալյազան շրջաններու մէջ Շարաթ օր տեղի ունեցած բախումներուն ընթացքին սպաննուած էին ութ պաղեստինցիներ:

Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ կացութիւնը վատթարացաւ անցնող շաբաթուան ընթացքին, երբ պաղեստինցի զինեալներ Երուսաղէմի մէջ սպանեցին Իսրայէլի զօրաշրջութեան նախարար ծալրալեղ աշակողմեան Իեհաւաճ Ջիւրին: Իսրայէլ հակադարձեց Այսրորդանան ներխուժելով: Պաղեստինցիները կը դատապարտեն ներխուժումը, դիտել տալով, որ անոր նպատակը պաղեստինեան իշխանութիւնը տապալել է: Սակայն Իսրայէլ կը հերքէ, որ նման նպատակ կը հետապնդէ:

Պաշտպանութեան նախարար Պենիամին Պրն էլիպար ըսաւ, որ Իսրայէլ հետաքրքրուած չէ պաղեստինեան իշխանութեան յանձնուած հոգերը վերագրուելով, կամ պաղեստինեան իշխանութիւնը եւ անոր նախագահը տապալելով: Պրն էլիպարը աւելցուց, որ Իսրայէլ պաղեստինեան շրջաններէն պիտի հեռանայ, երբ պաղեստինցիները խոստանան, որ այլ շրջաններէն Իսրայէլի վրայ պիտի չյարձակին եւ պիտի կան

Շար.ը՝ էջ 10



«Տը քրոսիկն փլէյս» գիրքը իր հրատարակութեանն ի վեր (1993) թարգմանուած է հունարէն, անգլերէն, ֆրանսերէն, իտալերէն, յիսթորիոգրֆ, հայերէնի եւ լուսարէնի:

ԳՈՐԾԻՔ՝ ԹՐԲԱԿԱՆ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՁԵՌՔԻՆ

Վերջին ամիսների ընթացքում Հայաստանի եւ Սփիւռքի տարբեր քաղաքական ուժեր, անհատներ ու մեկնարաններ բազմիցս նախազգուշացրին «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի հայազգի անդամներին, որ ողջ հայ ժողովրդի անունից ձեռնարկուող իրենց անպատասխանատու քայլով հարւածի տակ են դնում վերջին տարիների ընթացքում Արեւմուտքի տարբեր երկրներում աննախադէպ թափստացած Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը։

Նման նախազգուշացումները հիմնուում էին այն ակնառու իրողութեան հաշուառման վրայ, որ Թուրքիան փորձելով լուծել Եւրոմիութիւն խցկուեալու հիմնահարցը եւ այդ ճանապարհին քախուելով Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու ու Հայաստանի հետ դիւանդադատական յարաբերութիւններ հաստատելու Եւրոխորհրդարանի պահանջներին, իրեն ոչնչով չպարտաւորեցնող «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի աշխատանքներին օժանդակելու փաստով փորձելու է միջազգային հանրութեան մօտ ձեւաւորել հայերի հետ երկխօսութեան զնալու պատրանք եւ այլ կեղծ գրկախառնութեան մէջ խեղդել ու մի կողմ նետել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը։

Ի պատասխան այդ նախազգուշացումների, ալիքարկումանեանները ու Ամերիկայի Հայկական Համալուծարի պատասխանատուները յայտարարում էին, թէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը եւ «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի աշխատանքները պէտք չէ հակադրել մէկը միւսին, որ հայ - Թրքական երկխօսութիւնը հնարաւորութիւն կը տայ առանց կողմնակի միջամտութեան՝ հէնց հայերի ու Թուրքերի կողմից քննարկել Հայոց Ցեղասպանութեան հիմնահարցը, եւ որ իրենք ամենեւին կասկածի տակ չեն դնում Ցեղասպանութեան փաստը եւ այլն, եւ այլն։

Թէ ինչ եղաւ դրա արդիւնքը՝ այսօր յայտնում են աշխարհի լրատուամիջոցները։ Հոկտեմբերի 10ին Եւրոխորհրդարանի քաղաքական յանձնաժողովն ընդունեց Փրանսսացի պատգամաւոր Ալէն Լամասուրի տեղեկաւորը, ուր Եւրոմիութիւն մտնելու համար Թուրքիայի առջեւ նախկինում դրուած պահանջներ չարքում լացակայում է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը՝ «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի աշխատանքներին չխանդարելու պատճառարարութեամբ։ Պարզ է, որ այդ քայլն արուել է հէնց Թրքական կողմի խնդրանքով, որը ալիքարկումանեանների հետ սկսուած խարուսիկ սիրախղր եւրոպական հանրութեանն է ներկայացրել որպէս տեղի ունեցածը մոռացութեան տալու գնով Թուրքերի հետ հաշտուելու ողջ հայ ժողովրդի ցանկութիւն։

Հոկտեմբերի 23-25ին Ալէն Լամասուրի տեղեկագիրը գրուելու է Եւրոխորհրդարանի քննարկմանը եւ եթէ այդ հեղինակաւոր հաստատութիւնը միանայ իր յանձնաժողովի տեսակէտին, ապա դրանով փաստօրէն խաչ կը քաշի 87ին իր իսկ ընդունած յայտնի որոշման վրայ եւ որպէս այդ ամէնի հետեւանք՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը յետ կը մղուի ասուուպն 20-25 տարով՝ քուրդ նետելով այդ ընթացքում կատարուած հակադասուալ աշխատանքը։

Ճիշդ են տաւււմ, որ եթէ զողը տանից լինի, եզը երդիքով կը հանեն. ալըպէս էլ անուան են Թուրքերը մի քանի իրենց հայ հասարող դործիչների ու կազմակերպութիւնների ձեռքով քնջելով ողջ հայ ժողովրդի հանդէպ իրականացուած յանցագործութեան հետքերը եւ լուրջ յայտ ներկայացնելով քաղաքակիրթ ազգերի միութիւն՝ Եւրոմիութիւն մուտք գործելու համար։

Չենք կասկածում, որ սրանից յետոյ էլ ալիքարգումանեանները եւ Ամերիկայի Հայկական Համադուծարի գծով նրանց գործընկերները կը փորձեն արդարացում գտնել իրենց պահուածքի համար, Եւրոխորհրդարանի պատգամաւորները դիրքորոշման մէջ նկատուող փոփոխութիւնը կը փորձեն բացատրել ինչ-ինչ աշխարհաքաղաքական կամ այլ շահերով եւ համոզել հանրութեանը, որ Եւրոխորհրդարանի քողաքական յանձնախմբի տեղեկագրից Հայոց Ցեղասպանութեան պահանջի դուրս մղումը սոսկ «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի աշխատանքներին չխոչընդոտելու փաստարկով պայմանաւորելը ոչ թէ պատճառ, այլ միայն յարմար առիթ է եւրոպական խորհրդարանականների համար։ Նախօրէք նրանց պատասխանենք՝ այդ դէպքում աւելի վատ հէնց ձեզ համար, որ դուք ձեր իսկ ձեռքով Թուրքերին եւ նրանց միջոցով՝ Եւրոխորհրդարանի պատգամաւորներին յարմար առիթ էք տալիս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդիրը մէջտեղից հանելու եւ ապաշխարելու հրաժարուելոյ Թուրքիայի առաջ լացում էք Եւրոմիութեան ճանապարհը։

Աւելին. այսօր բոլորս ի լուր ամէնքի պարտաւոր ենք յայտարարել, որ «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի հայ անդամները գործիք են դրած թրքական դիւանապիտուութեան ձեռքին եւ նրանց օգտագործում են որպէս մէկուկէս միլիոն անմեղ հայերի արիւն լուանալու համար նախատեսուած Թրքական արտագրութեան օճառ։ Ուստի եթէ ունեն դոյզն ինչ ազգային արժանապատուութիւն, ապա պարտաւոր են աւուռնագն մինչեւ Հոկտեմբերի 23ը (երբ Եւրոխորհրդարանն սկսելու է քննարկել պատգամաւոր Լամասուրի տեղեկաւորը), «Հայ - Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի բոլոր հայ անդամներն անունից յայտարարել. քանի որ նորոստեղծ յանձնաժողովի աշխատանքներն օգտագործւում են ողջ մարդկութեան դէմ իրագործուած յանցագործութեան, Հայոց Ցեղասպանութեան փաստն անստեղծ եւ այդ յանցագործութիւնը կատարած երկրի Թուրքիայի եւ Եւրոմիութիւն մուտք գործելու ճանապարհին կանաչ լոյս վառելու համար, «Հաշտեցման» յանձնաժողովի բոլոր հայ անդամները, դուրս են գալիս նրա կազմից եւ այդ մասին պաշտօնապէս տեղեկ են պահում Եւրոխորհրդարանին։

Այս լուրը խնդրի վերաբերեալ պարտաւոր է իր յստակ դիրքորոշումն արտայայտել նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը եւ նախազգուշացնել Եւրոխորհրդարանին, որ Լամասուրի տեղեկաւորի ընդունման դէպքում ինքը դրանով իսկ աջակցում է մարդկութեան դէմ յանցագործութիւն կատարած երկրին՝ Թուրքիային, սեփական արարքի համար պատասխանատուութիւնից խուսափելու անպատուաբեր պոքծում։

«ՀԱՅՈՑ ԱՆՍԱՐՀ»

ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՒ ՄԵՆՔ

Աշխարհի տարածքին եւ միջազգային վրայ կ'ապրինք ժամանակաշրջան մը, որ յդի է զլիսպտույտ յառաջնացնող իրադարձութիւններով։ Ամէն ինչ ցոյց կու տայ, որ համաշխարհային մակարդակի վրայ նոր իրավիճակ մը ստեղծուած է այլեւս, մանաւանդ 11 Սեպտեմբերին Միացեալ Նահանգները հարուածած ահաբեկչական արարքներէն ետք։

Տարակոյս չկայ, որ այս իրողութիւնը իր անմիջական ազդեցութիւնը կրնայ ունենալ պետութիւններու միջեւ յարաբերութիւններուն վրայ, որովհետեւ Միացեալ Նահանգներ եւ անոնց դաշնակիցները, փորձելով իրենց քաղաքականութիւնը պարտադրել գահապան մարզերում մէջ, նաեւ կը ձգտին տնտեսապէս թափանցել աշխարհի որեւէ երկիր՝ միջազգային տնտեսական հաստատութիւններու եւ ընկերութիւններու միջոցով։

Ահաւասիկ այստեղէն եկած է «համաշխարհայնացում» հասկացողութիւնը, որ իրրեւ տնտեսական կայսերապաշտութեան արտայայտութիւններէն մէկը՝ ծնունդն է նոր ազատական գաղափարախօսութեան եւ դրամատիրութեան։ Հետեւաբար համաշխարհայնացումը, իրրեւ տնտեսական եւ ընկերային շահագործումի գաղափարախօսութեան ծնունդ, ունի իր ժխտական կողմերը։

Համաշխարհայնացումէն առաջ եւս գոյութիւն ունեցած է շահագործում՝ ընկերային, տնտեսական, քաղաքական եւ ազգային մակարդակներու վրայ, սակայն մարդ անհատը, հաւաքականութիւնները եւ ազգերը միշտ այ պաքարի դռջ բարձրացուած են գեծ մնալու համար որեւէ շահագործումէ եւ ստեղծելու համար իրապէս մարդկային դիմադիծով հասարակութիւն

Իր ներկայ ընթացքով համաշխարհայնացումը ապագայի հաշուոյն մարդկութիւնը կ'առաջնորդէ աղէտներու անվերջ շարքի մը, տակաւ քաքայման կը տանի ազգային տնտեսութիւնները, իսկ տնտեսական, ընկերային եւ քաղաքական իմաստով պետութիւնները կախեալ կը պահէ միջազգային տնտեսական կազմակերպութիւններու օժանդակութենէն։

Կը սկսի խորանալ վիհը Հիւսիսի հարուստ եւ Հարաւի, Երրորդ աշխարհի աղքատ երկիրներուն միջեւ։ Տեղ մը կ'ունենանք ընկերութիւն մը, որ կ'արտադրէ եւ ճարտարարուեստ կը ստեղծէ, միւս կողմը կ'ունենանք այլ ընկերութիւն մը, որ ճարտարարուեստականացումի վիճակին չէ հասած, քաղաքականապէս կախեալ է եւ ենթակայ՝ բնական պատերազմական աղէտներու եւ որ ձեռքբեր կ'երկարէ հարուստ պետութիւններու եւ միջազգային ընկերութիւններու «ողորմութեան» եւ պարզապէս կը ծառայէ իրրեւ սպառողական շուկայ՝ ճարտարարուեստական երկիրներու արտագրութիւններուն համար։

Համաշխարհայնացման այս մօտեցումն է, որ կը ստեղծէ բուռն հակազդեցութիւն արհեստակցական միութիւններու, կենսոլորտի պաշտպանութեան կազմակերպութիւններու եւ ընկերվաւրական ու ձախակողման կողմնորոշումով շարժուծներու մօտ։ Իսկ այս հակազդեցութիւնը բնական է, որ արտայայտուել բողոքի ելոյթներով՝ փողոցը, Սիէթլըն՝ ժընեւ։

Այս բողոքն ետք մեր առջեւ կը գծուի հարցական մը. յատկապէս դաշնակցական ուսանողութիւնը, իրրեւ ազգային եւ ընկերվաւրական դադափարներ դաւանող կուսակցութեան մը բաղկացուցիչը, ինչպիսի՝ դերակատարութիւն պէտք է ունենայ Հայաստանի եւ հայութեան դիմագրւած համաշխարհայնացման մարտահրաւէրները դիմակայելու աշխատանքին մէջ։

Դժուար է խօսիլ համաշխարհայնացման դէմ պայքարին մասին, եթէ չունինք միջոցները, որոնք կարելիութիւն կու տան պայքարը սկսելու։ Հակահամաշխարհայնացումի խմբականոր իրենց քարոզչութիւն ծաւալելու եւ երիտասարդական խմբակներ գորաշարժի ենթարկելու համար կը դիմեն նոյն միջոցներուն, որոնք ծնունդն են համաշխարհայնացումին՝ համացանց, հաղորդակցութեան արդի միջոցներն, եւ այլն։


Ներկայիս Հայաստան կը դիմագրաւէ ընկերային, տնտեսական եւ քաղաքական մարտահրաւէրներ, որոնց դէմ կանգնելու համար մենք պէտք է օգտուինք համաշխարհայնացումին ընձեռած միջոցներէն։

Միւս կողմէ, սակայն, պէտք է կառչած մնանք մեր ազգային արժէքներուն եւ հակահամաշխարհայնացման շարժումէն որդեգրենք այն գաղափարները եւ միտքերը, որոնք կը յարմարին մեր քրքնիքին եւ ժողովուրդին ներկայ պայմաններուն, լուծում կը բերեն հայ ժողովուրդի ներկայիս ընկերային եւ տնտեսական տաղնապնեւրուն։

Դաշնակցական ուսանողները պէտք չէ վարանին այս հարցերը գաղափարական եւ տեսական քննարկումի ենթարկելէ։ Մեր դիմաց ուրիշ միջոց չկայ, լացի համաշխարհայնացման մարտահրաւէրներուն դէմ ազգու կերպով պայքարելու համար պատրաստուելէ։

ՓԱՔ ՅԱԿՈԲԵԱՆ

ՓԱԿ ՇՐՁԱՆԱԿԻՆ ՄԵՉ



Պատերազմ՝ ի խնդիր խաղաղութեան. հակառական եւ խաբուսիկ արտայայտութիւն մը՝ «հակապատերազմ» պաստաւորով եւ բացազանութիւններով Սեպտեմբեր 29ին Ուաշինկթընի փողոցները խճողած ցուցարարներուն համար։ Սակայն, միւս կողմէ, նոյն այս արտայայտութիւնը այնքա՛ն ճիշդ կը հնչէր «Փենսիլվանիա Ավրիլ»ի վրայ ցուցարարներուն դէմ կանգնողներուն համար, որոնց բարձրացուցած պատառներուն վրայ գրուած էր «Բալլի եկած էք. Պըն Լատեկի համալիրնէր», «Ինքնապաշտպանութիւնը լաւ բան է», «Պատերազմն է, որ ինքլէր մէջտեղէն վերցուց» եւ նմանօրինակ այլ լողունգներ։

Այդ օրը «Փենսիլվանիա Ավրիւ»ի վրայ պարգուած պատկերը մանրանկարն էր Սեպտեմբեր 11էն ետք աշխարհի տարածքին որդեգրուած կեցուածքներուն։ Արդարեւ, ամերիկացիներուն չգօրակցող մեքենայարար ահաբեկիչներուն կողմնակից գիտնութիւնները մօտեցումը «21րդ դարու առաջին պատերազմ»ը վերածեց աշխարհաքաղաքակա-

նութեան վերաբեւութեան մը, սակայն, եւ անոնք պիտի ուր Պըն Լատէն մը որսալու առաջադրանքը պատառեւ աւելի պատրուակ լապաշա քաղաքականութեան համար։

Սակայն, հեռու՝ քաղաքական սեղմ շրջանակներու մէջ ծաւալող աշխարհակայական սաղրանքներէ, «հակապատերազմ» հոսանքը ցոյց տուաւ «փողոց»ին կարթողականութիւնը, գէթ հանրային կարծիքին ու շադրութիւնը իր վրայ հրաւիրելու առումով։

Ուաշինկթընի եւ աշխարհի տարրեր երկիրներու մէջ «հակապատերազմ» ցոյցեր կատարողները «խեղադրուած ամբողներ» չէին, անոնք կը գիտակցէին, թէ ամերիկեան որեւէ յարձակում անմեղ բնակչութեան տառապանք պիտի պատճառէր, եւ թէ վայրագուութեան փակ շրջնակ մը պիտի ստեղծուէր, եւ ղժուար պիտի ըլլար գողեգրուած կեցուածքներուն։ Արդարեւ, ամերիկացիներուն չգօրակցող մեքենայարար ահաբեկիչներուն կողմնակից գիտնութիւնները պիտի նկատուէին հետագայ սերունդներուն խաղաղութիւնը ապահովող միակ ընտրանքը, անոնց համար

Խ. Մ.

ԹՕԹԱՓԵՆՔ «ԾՈՒԿԱՅՅԱԿԱՆ» ՄՇԱԿՈՅԹԸ...

Հայաստանի Թ. Հանրապետութեան սկզբնական շրջանին գոյացած տնտեսական տագնապը դժբախտաբար ստեղծեց նաեւ «շուկայական մշակոյթ» մը։ Մշակոյթը կարձաւ ապրուստի ու երբեմն նոյնիսկ շահագործման միջոց, իսկ ստեղծագործական կարողութիւնները ընկղմեցան առօրեայ հեւքի մէջ։

Հայկական մշակութային արժէքներու պահպանումը իւրաքանչիւր հայու ազգային պարտաւորութիւնն է, իսկ անոր վրտ վիճակն մէջ գտնուելու պատճառներէն են երկրին տնտեսական պայմանները։

Իսկ Հայաստանի կառավարութեան ճշօրարան վարած մշտնադիւանդութեան պահպանումը իւրաքանչիւր հայու ազգային պարտաւորութիւնն է, իսկ անոր վրտ վիճակն մէջ գտնուելու պատճառներէն են երկրին տնտեսական պայմանները։ Իսկ Հայաստանի կառավարութեան ճշօրարան վարած մշտնադիւանդութեան պահպանումը իւրաքանչիւր հայու ազգային պարտաւորութիւնն է, իսկ անոր վրտ վիճակն մէջ գտնուելու պատճառներէն են երկրին տնտեսական պայմանները։ Իսկ Հայաստանի կառավարութեան ճշօրարան վարած մշտնադիւանդութեան պահպանումը իւրաքանչիւր հայու ազգային պարտաւորութիւնն է, իսկ անոր վրտ վիճակն մէջ գտնուելու պատճառներէն են երկրին տնտեսական պայմանները։

Այդ յարաբերութիւնները, որոնք թէեւ կարգ մը մարգերու մէջ Հայաստանը կ'առաջնորդեն դէպի գարգացում, իրենց հետ կը բերեն նաեւ օտարական բարոյապէս յուռի սովորութիւնները, համաշխարհային «մշակոյթը», ապագայի գաղափարախօսութիւն...

Համաշխարհայնացումը արդէն ստեղծուած է մէկ մշակոյթի գաղափարը՝ համաշխարհային «մշակոյթը», որ զլիսաւորարար հովանաւորուած է Ամերիկայի կողմէ։ այս հոսանքին ազդեցութիւնը գոյութիւն ունի թէ՛ Սփիւռքի տարածքին եւ թէ՛ Հայաստանի մէջ։

Պէտք է հետեւիլքն այլ մշակոյթներու ծաւալումին մինչեւ ա՛յն պահը, երբ անոնք կը սկսին

վնասել մեր մշակութային արժէքներու պահպանման ու գարդացման։ Առաջին հերթին պահենք նախորդ սեւեռնողներէն փոխանցուած մշակութային հարստութիւնը, ապա ստեղծենք նորը, արդիապետականը, իսկ ամէնէն կարեւորը՝ մեր իւրայատուկ յատկանիշներով հայկականը։

Հայաստանի տնտեսական պայմաններուն հետեւանքներէն մէկը եղաւ նաեւ այն, որ մարդիկ ստիպուեցան իրենց դրքերը վաճառքի հանել։ Այսօր Հայաստանի կարգ մը տուներուն մէջ գտնուող գրագարաններու գրքերը դժբախտաբար կը ծախուին հրապարակներուն եւ չէնքրեւուն աստիճաններուն վրայ։ Իսկ կարգ մը գրողներու մօտ խորհրդապոյն Միութենէն ժառանգուած պետական պատուէրներով գրակաւնութեան շարունակումի հետքերը տակաւին գոյութիւն ունին, իսկ այլ խումը մըն ալ կը հետեւի «սանձարեւակ» գրակաւնութեան ոճին, որ չունի սկզբունքներ։

Երբեք իրաւունք չունիք հայ մշակոյթի ջահակիրներու դալիք ուրուող անտէր ձգել Երեւանի փողոցներուն մէջ եւ, միւս կողմէ, գարգաշելու քաջաբերկ հաճոյապաշտներու գիշերային քրօսաշրջութեան ու վալիքի վայրերը՝ շուկայական մշակոյթը...

Երեւանի մէջ թէ՛ այլ տեղ «գործող» արուեստագէտները հասապային անպայման պիտի հանդիպուան կոմիտասներու, Շանթերու, խաչատուրեաններու գործը շարունակողները, եթէ ունենան հովանաւորող, հետաքրքրուող, քաջալիւրող...

Այո՛, Հայաստանի մէջ գոյութիւն ունին երաժիշտներ, որոնք հրապարակներու անկիւնները

նուազելով կ'ապահովեն իրենց ապրուստը։ Այո՛, նախկին գրասէրները այսօր կը ծախեն իրենց ունեցած գրքերը մայթերուն վրայ, իրենց օրուան հացը պահածվելու համար։ Այո՛, հայ նկարիչները կը ձեռնարկեն թեթեւ ու արագ նկարչութեան, որպէսզի...

Իրապաշտ ըլլալը, Հայաստանի այսօրուան մշակութային իրավիճակը ճիշդ ու լաւ ճանաչող միայն կ'առաջնորդէ թեւրութիւններու սրբագրումին։

Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի առիթով Հայաստանի մէջ կատարուած մշակութային բազմատեսակ հանդիսութիւնները եւ հեռաւտեսիլի կարգ մը կայաններու կողմէ հեռիւայացւած հայկական մշակոյթի պահպանման նպատող յայտադիրները, ինչպիսին են՝ «Տ. Թ. Միկ», «Հոռովքը» ու «Գնունկ»ը, յոսալի ապագային մը ճառապայթն են, որովհետեւ վերջերս նկատելի է բարեկուսն ընթացք մը, թէկուզ յառաջիկայացքը դանդաղօրէն տեղի կ'ունենայ։

Հայ մշակոյթի պահպանումն է միայն, որ կ'առաջնորդէ հայ ժողովուրդը դէպի հայապահպանում, այլապէս Հայաստանը կը դառնայ միմիայն քարածածկ հողաւարածք մը՝ դատարկուած ազգային ինքնութիւնութեան։

Քիտնանք հակադրուող հոսանքին տարողութիւնը ու անոր նպատակները եւ ապա որոշենք մեր ապագայի առնելիք քայլերը՝ աշխատանքները ու աշխատելաձեւերը։

Այսօր հայ մշակութային արժէքները պահպանողներու բացակայութիւնը ակնհայտ է, իսկ ներկայութիւնը՝ անհրաժեշտ։

ՐԱՖԷԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ



«ԱԻԱԶԻ ԺԱՄԲԱՆԵՐ»

ՄԻՋԵԼ ՇԱԼԵ ԷԿԱՅԵԱՆ ՊԱՐԱՆՈՒՄԲԸ «ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆՆԵՐ»
 ՊԱՐԱՅԻՆ ՇԱՐՔԻՆ ՉՈՐՐՈՐԴ
 ԳՈՐԾԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

հզորութեամբ, կը թրթռան գունաւոր ապա-
կիներու թափանցիկութեան մէջ, գունաւոր
ապակիներու վարպետներէն միինչեւ Սու-
լաթ, ասոնք կը սահէն մտերմութենէ մտեր-
մութիւն, մեր սահմանէն անձնական ներհոսն
իղձերուն տարածութեան մէջ»:

Պարհին առաջին մասը (20 վայրկեան) կ'ընդգրկէ Փասքայ Օթուալի եւ Նապիհ իսթիպի երաժշտութիւնը: Բեմին խորքին կը լուսարձակուին խորհրդանշական ծառերու գեղանակները, ստոտները եւ սիւները: «Մարդիկ դուրս կու գան քարայրներէն՝ իրենց ետին ձգելով ժառանգատկերները, զորս գեղանկարիչներն ետէ համբերութեամբ զծած են դարեւրու ռմեսայքին: Անոնք կ'իթան ղէպի ծառերը, որոնք սիւնի ու ստոտնով վերածնունտ են եւ ցոյց կու տան երկինքի ճամբաները»:

Երկրորդ մասին մէջ (20 վայրկեան) կը
հնչէ Պեթճօպէնի եւ Ժան Քրիսթօֆ Տեգէրի
երաժշտութիւնը: Պուրժի մայր տաճարին
ռուսաւոր ապակիներուն պատկերները կը
լուսարձակուին եւ «պարը կը յայտնաբերէ
Արեւմուտեի մայր տաճարներուն գունաւոր
ապակիներուն լուսաւորումները՝ 13րդ եւ
14րդ դարերու վարպետ ապակեգործներու
արուեստին ներշնչում տուող արաբական
զարդարուեստին լոյսին տակ: Մայր տա-
ճարներուն գունաւոր ապակիներուն պատ-
կերները կ'օրօրեն պարային սէրերը, երեւա-
կայութենէ զերծ մաքրութեան մը մէջ:
Անոնց զարդարուեստին ստեղծուած միակ
պատկերը կազմուած է պարեմէ, որոնք ապ-
րող զեղարուածիւններ են, որոնց լուսաւոր
շարժումները կը փայլփլին պարին լոյսին մէջ»:

Երրորդ մասին մէջ (17 գլխիկեան) լուս-
 թեան խորապատկերի մը վրայ կը ծաւալի
 Լէօ Ֆերբէշի երաժշտութիւնը: «Գուռեւոր
 սպանակներու լուսը կ'որդոյն պարը, կը հալի
 պարողներուն մէջ, որոնք կը կրեն Սուլաթը
 սպաներած Քոնքի աշխարհէն թափանցի-
 կութիւններ»:

Փիեռ Սուլափ իր պատանեկության Անջելոս ար Քրոջ եկեղեցիին մէջ լոյսի ու շուրջ միջոց տաք գրոյցի մը փորձագողիւնը տարիներ յորոշած է գեղանկարիչ դառնալ: 1919ին ծնած այս արուեստագէտին գործերը կը պարունակեն քնական ու պարզ գօրութիւն մը: Անոր գանգուածային եւ արագ շարժումով յատկանշուած գիծերը կը մարմնաւորեն խորհրդանշական հիմնական ալրուբներ մը, իսկ անոնց ուժգնութիւնը կը շեշտուի ջինջ խորապատկերի մը վրայ կիրարկուած մոնօք գոյներով եւ տրամաթիք լուսաւորումով:

Միշտ էլ Հալէ եկայեան Փիեռ Սուլափի ար-
ւեստէն ներշնչուած՝ կ'ըսէ. «Գունաւոր
ապակիները պարզապէս մակերես մը չեն
էնչոնց պատկերը տարաքին երեւոյթ մըն է
միայն: Անոնք կը մղեն մեր զգացականու-
թեան մէջ գտնելու լոյսի տարածութիւնը:
Պարը միայն արտաքին երեւոյթ մը չէ. անի-
կա տարածութեան զոգնոյթն է: Մարմնին
միւր միայն պատկեր է: Եւ ինչպէս գունա-
ւոր ապակիին կեդրոնը, նոյնպէս պարի
սրտին մէջ կը գտնուի կորիզը բանի մը, որ
ստեղծուած է բոլորին համար. տարածու-
թիւն մը, որ գոյնութիւն ունի բոլորիս մէջ,
տարածութիւն մը, որ ի վերջոյ կը ծնի կա-
կուղցած զգացումով լեցուած հոգիին գոյ-
ներուն մետաքսային շօշափումով»:

Արդի պարի նոր ուղիներ որոնող ար-
ուեստագետ մը՝ էկայեան պարային իր
պատկերներուն մէջ կը միաձուլէ տարբեր
արուեստներ, ինչպէս՝ բանաստեղծու-
թիւնը, ճարտարապետութիւնը, գեղանկար-
չութիւնն ու քանդակագործութիւնը: Անոր
յղացած շարժումները ամուր կերպով հաս-
տատուած են դասական պայէի աւանդու-
թեան մէջ, սակայն արդի իւրայատուկ ոճ
նա կը զարգացնեն՝ ազդելով մարդկային
գեղացական աշխարհին խորքը:

Պարի միջոցով մշակութային բարձր մակարդակի գիտակցութիւն մը զբաւեւող աչա արուեստագէտ Նիւ Եոքթի մէջ աշակերտած է արգի պարի տիտաններէն Մըրս Քանինկհամի: Ան Միշէյ Հալէ էկայեան պարախումբը հիմնած է 1977ին, իր ծննդավայր Լիոնի մէջ, ուր կը ղեկավարէ արգի պարին եւ պայլէի իր սեփական գպրոցը: Էկայեան Աւիինոնի 1982ի փառաւոսին մասնակցած է հայկական ներշնչով իր «Քարաստան» ստեղծագործութեամբ, որ կ'ոգեկոչէ հայկական տիգերական երեք խորհրդանշներէն. բառը, խաչքարն եւ Արարատը: Անկիւն նաեւ կ'ընդգրկէ Փարաջանովի «Հրեկէն ձիեր» ժապաւէշին եւ Արշիլ Գորգիի «Արուեստագէտը եւ իր մայրը» գեղանկարին նուերակած պարեր:

*«Շրվեն տը Սապլ»ի առաջին ներկայացույց տեղի պիտի ունենայ 26 Հոկտեմբեր, ներկայյան ժամը 8:30ին վարչապետ Ռաֆիք Հախրիբյի հիմնարկին քառերասարահին մեջ (Սալտա): Պարային այս ստեղծագործությունը 31 Հոկտեմբերին եւ 1 Նոյեմբերին երեկոյան ժամը 8:30ին պիտի ներկայացուի Լիսեյ Սպտիլ Բատեր քառերասարահին մեջ (Պէլրոն):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ՝ ՀՈԼԱՆՏԱՅԻ ՄԷՋ**

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին առիթով Նոյեմբեր 2001էն Մարտ 2002 Հոլանտայի տարբեր քաղաքներուն մէջ տեղի պիտի ունենան հայկական նախաքրիստոնէական, միջնադարեան եւ ժամանակակից մշակութիւն նուիրուած ձեռնարկներ: Այս առիթով կազմակերպուած են ցուցահանդէսներ, դասախօսութիւններ, պատմագիտական, դրամատիկական եւ ուղեւորութիւններ:

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐ

Ութը եւ խիստ քաղաքին մէջ ֆալթարիկներուն վէնթ թանգարանը 3 Նոյեմբեր 2001էն 3 Մարտ 2002 պիտի ցուցադրէ Հայկական մասնաւոր իւր չճեման միջնադարեան նմուշներ եւ ձեռագիրներ, բերած՝ Երեւանի Մատենադարանին աւելի քան 15 հազար ձեռագիրներէ բաղկացած հաւաքածոյն: Զուգահաճօղէսը կը կրէ «Հայ աւան. միջնադարեան մանրանկարներ քրիստոնէայ Արեւելիք» վերնագիրը:

«Գիրք մը կազմելը հա-
ւատաւոր արարք մը կը
նկատուէր Հայաստանի
մէջ, հետեւաբար անիկա
նաեւ սրբազան իր մըն-
